

589.8

E-81

581.8
Ե-31

ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՓԱԿՈՒԼՏԵՑ

ԱՌՆԱՋԱԿՐՈՒԹՅՈՒՆ

Մեթոդական ցուցումներ

**«ԲՈՒՅՍԵՐԻ ԱՆԱՏՈՄԻԱ ԵՎ ՄՈՐՖՈԼՈԳԻԱ»
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

I կուրսի համար

Բույսերի անատոմիայի և մորֆոլոգիայի դասընթացը մշակելիս / դուք ձեր ձեռքի տակ պետք է ունենաք պրոֆ. Բեդեկյանի «Բույսերի անատոմիա», պրոֆ. Կուրսանովի և պրոֆ. Գոլենկինի «Բույսերի մորֆոլոգիա և էկոլոգիա» դասագրքերը (հայերեն լեզվով): Մեթոդական նամակը, որով դուք պետք է առաջնորդվեք ձեզ առաջադրված թեմաները մշակելիս (նաև զրավորը պատրաստելիս), կազմված է ըստ ծրագրի, բաժանելով հետևյալ թեմաների՝ I. բուսական բջիջ, II. նյութվածքներ, III. բույսերի վեգետատիվ օրգաններ, IV. ցողուն, V. արմատ, VI. տերև, VII. բույսերի բազմացումը:

Առանձին թեմաները մշակելիս դուք պետք է կարդաք հանձնարարված գրականության մասնանշված էջերը և ուշադրությամբ դիտել նաև այն նկարները, որոնք Ն Ն-ով ցույց են տրված մեթոդական նամակում: Առաջադրությունները մշակելիս ձեր կազմած տեքստում պետք է լինեն նյութին վերաբերվող նկարներ: Այլ կերպ նյութն անհասկանալի կմնա: Հիմա անցնենք առաջին թեմայի մշակմանը:

Թեմա I. Բուսական բջիջ, նրա առանձնահատկությունները

Եթե դուք ձեր ձեռքի տակ ունեք փոքր հարմարություններ, կարող եք կատարել մի փոքր զործնական աշխատանք, գիտելու՝ բուսական բջիջը և նրա առանձին մասերը, դա պետք է կատարել հետևյալ ձևով. —



1
(14541-58)

Սոխի թաղանթի գունավոր, փայլող երեսից ամելիով կամ սուր դանակով կտրել մի փոքր կտոր, դնել առարկայակիր ապակու վրա, վրան ապակյա ձողով կաթեցնել ջուր, ծածկել ծածկող ապակով և դիտել միկրոսկոպի օգնությամբ: Դուք ձեր պատրաստած պրեպարատի վրա կտեսնեք հետեվյալը՝

1. Սոխի թաղանթի երկարավուն բլիջները շրջապատված թաղանթով:

2. Բլիջների գունավոր պարունակությունը:

3. Բլիջների կենտրոնական մասում երևում է բլջակորիզը: Լինում են դեպքեր, երբ կորիզները լավ չեն երևում: Իրա համար ձեր պատրաստած պրեպարատի ծածկապակին վերցնում եք, կողքից ապակյա ձողով ջրի փոխարեն կաթեցնում եք մեթիլ-կանաչի 1%-ային լուծույթ: 2—5 րոպե ապասկուց հետո դիտում եք միկրոսկոպով: Այս դեպքում դուք սոխի թաղանթի բլիջներում լավ կտեսնեք բլջակորիզը, ներկված կանաչ գույնով:

Անհրաժեշտ նյութեր.—

1. միկրոսկոպը, 2. առարկայակիր ապակի, 3. ծածկող ապակի, 4. սոխ, 5. ապակյա ձողիկ, 6. դանակ կամ ամելի, 7. մեթիլ-կանաչի 1%-ային լուծույթ (այս ներկը դուք կգտնեք դեղատներում փոշու ձևով, նրանից պետք է պարաստել 1%-ային լուծույթ, այսինքն 1 գրամ նյութ լուծել 100 խ. ս. ջրի մեջ):

Այս փոքրիկ գործնական աշխատանքը ձեզ հնարավորություն կտա զազափար կազմելու բուսական բլիջի առանձին մասերի մասին:

Հիմա անցնենք տեսական մասի մշակմանը:

1. Պրոտոպլազմայի ֆիզիկո-քիմիական հատկությունների մասին: Կարգալ պրոֆ. Բեդեյանի «Բույսերի անատոմիա» գրքից 24—48 էջերը, ուշադրություն դարձնել պլազմոլիզի երևույթի վրա, բլջակորի քիմիական կազմությունը և նշանակությունը: Անհրաժեշտ է դիտել նկ. № № 3, 4, 6, 7. այդ կատարելուց հետո դուք կանցնեք հետեվյալ մասերին:

2-րդ. Բլջակորիզ, նույն դասագրքում (էջ 49—54), նքա քիմիական կազմությունը և նրա դերը թաղանթ կազմելու պրոցեսում: Դիտել նկ. № 10:

3-րդ. Պլաստիդներ (էջ 54—66):

Այս նյութի ամենակարևոր դերը պատկանում է քլորոֆիլի հատիկներին (քլորոպլաստներ), կարգալ այդ մասին և դիտել նկ. № 12, 13 և հետո անցնել մյուս պլաստիդների (քրոմոն և լեյկոպլաստներ) մշակմանը:

4-րդ. Բլջաթաղանթ (էջ 66—78):

Նրա քիմիական կազմությունը. ցելուլոզ. նրա արդյունաբերական նշանակությունը: Թաղանթի աճն ըստ ինտուսուսեպցիայի և ըստ ապոֆիցիայի տեսությունների: Թաղանթի քիմիական փոփոխությունները.— 1. փայտացում, 2. լսցանացում, 3. լորձնացում, 4. կուտինացում:

Տեքստում գլխավոր ուշադրությունը պետք է դարձնել հետեվյալ նկարների վրա՝ նկ. № № 15, 16, 18, 19:

5-րդ. Բլջի պաշարային նյութեր (78—98):

ա) Օսլա, նրա քիմիական կազմությունը, ինչպես է կազմվում տարբեր բույսերի մոտ, դիտել դրա հետ կապված նկ. № № 20, 21, 22, 23, ուշադրություն դարձնել նաև ինուլինի վրա:

բ) Ճարպեր, նրանց քիմիական կազմությունը, դերը բուսական բլիջների կյանքում:

գ) Սպիտակուցներ. ալբյումնի հատիկների կազմությունը, դիտել նկ. № 25, 27 և ինչ դեր են կատարում: Իրանից հետո կարգալ բլջի հանքային նյութերի մասին, նույն դասագրքի էջ 99—106:

6-րդ. Բլիջների բազմացումը (էջ 106—120):

Այստեղ դուք ուշադրություն պետք է դարձնեք բազմացման հինգ ձևերի վրա և դիտել նկարները.

1. Նորոգում, դիտել նկ. № 31:

2. Կոպուլացիա, դիտել նկ. № 32 սպիրոգիրա շրիմուռի վրա:

3. Բլիջների ադատ ծագում, նկ. № 33:

4. Բլիջների բաժանում, նկ. № 34:

5. Բողբոջում, նկ. № 35:

Այս ձևերից ամենաբարդը բլիջների բաժանումն է կարիոկինետիկ ճանապարհով, այդ մասին դուք ավելի ուշադիր պետք է կարգաք և ուշադրությամբ նկ. № 34-ի վրա դիտել կորիզի մեջ ինչպիսի փոփոխություն է լինում մինչև երկու դուստր բլիջների ստացումը:

Թեմա II. Հյուսվածքներ (էջ 120—128)

Դասազրքում շատ հյուսվածքներ է նշված, դուք ձեր ուշադրութիւնը պետք է դարձնեք դրանցից մի քանիսի վրա—ինչպիսիներն են՝ 1. ծածկող, 2. փոխադրող, 3. մեխանիկական 4. ստիմիլացիոն, 5. սաղմային, 6. ծծող:

Մասնանշված էջերում դուք չեք գտնի լրիվ բացատրութիւն այդ բոլորի մասին, դրա համար պետք է կարգաւ լրացուցիչ կտորներ նույն դասազրքից:

Սկսենք առաջինից, որը կոչվում է ծածկող հյուսվածք: Ծածկող հյուսվածք ասելով պետք է հասկանալ՝

- ա) Էպիդերմիս—վերնամաշկ.
- բ) Հերձանցքներ.
- գ) Մազիկներ.
- դ) Սցան.
- ե) Ուպնյակներ:

Առաջին երեքի վերաբերյալ լրացուցիչ կերպով պետք է կարգաւ տերեւի անատոմիա գլխից (էջ 136—154), այդտեղ դուք ուշադրութիւն պետք է դարձնեք էպիդերմիսի բջիջների կազմութեան վրա միաշաքիլների և երկշաքիլների մոտ:

Հերձանցքների դերի, անատոմիական կազմութեան և փակվելու-բացվելու մեխանիզմի, կարգաւ մազիկների մասին. նկ. № № 43, 44, 47, 48, 49, 50, 52-ի վրա դիտել այն, ինչ որ կարդում եք տեքստում:

Չորրորդ և հինգերորդ հարցի՝ խցանի և սպոնջակների վերաբերյալ պետք է կարգաք ցողունի անատոմիա գլխում (էջ 187—190), դիտել նկ. № № 69, 70, դրանից հետո անցնում եք հյուսվածքների 2-րդ խմբի մշակմանը:

Փոխադրող կամ, ինչպես ձեր ծրագրում է ասված, հաղորդող հյուսվածքը կազմված է երկու մասից.

1) Չրատար անոթների կամ քսիլեմայի մասին կարդում եք ցողունի անատոմիա գլխում (էջ 155—160), նկ. № 55-ի վրա դիտել նրանց առաջացումը պարենխիմային բջիջներից:

2) Մաղանոթներ կամ ֆլոեմա, նույն գլխում (էջ 160—164) նկ. № 57-ի վրա դիտել մաղանոթների կազմութիւնը: Մյնուհետև էջ 164—168-ում կարդում եք անոթաթելային խրձերի մասին (Չրատար անոթ և մաղանոթ միասին վերցրած), դի-

տում եք նկ. № № 59, 60, ուշադրութիւն դարձնում բաց խուրձերի վրա նկ. № 59, որոնք ունեն կամքիւմ և գտնվում են երկշաքիլ բույսերի մոտ և փակ նկ. № 60, որոնք կամքիւմ չունեն և լինում են միաշաքիլների մոտ:

3) Մեխանիկական հյուսվածքի մասին, որը նույնպես երկու մասի է բաժանվում՝

- ա) Սկլերենխիմա.
- բ) Կոլենխիմա:

«Հյուսվածքներ» գլխում ուշադրութիւն եք դարձնում նրանց դերի և նշանակութեան վրա. դիտում եք տեքստում եղած խոր նկարները:

- 4. Ասիմիլացիա.
- 5. Սաղմային.
- 6. Ծծող:

Այստեղ խոսել սաղմային հյուսվածքի մասին, արմատի և ցողունի աճման մասին, ըստ երկարութեան և ըստ լայնութեան: Իրանով դուք ավարտում եք հյուսվածքների գլուխը և պետք է անցնեք հաջորդ թեմայի մշակմանը:

Թեմա III. Բույսերի վեգետատիվ օրգաններ

Այս թեման մշակելիս ամենից առաջ դուք պետք է մշակեք ծրագրի մի շարք հարցեր, ինչպիսիք են՝ բույսերի ձևի դարգացումը, ճյուղավորում, սիմետրիա և նրա տարբեր տիպերը:

Հասկացողութիւն մետամորֆոզի մասին:

Ռեզուկցիա, ուղղիմենտներ, հոմոլոգ և անալոգ օրգաններ: Կարգաւ պրոֆ. Կուրսանովի և պրոֆ. Գոլենկինի «Բույսերի մորֆոլոգիան և էկոլոգիան» դասազրքից էջ 22—38, տեքստը կարգալիս ուշադրութիւն դարձնել հետեւյալ նկարների վրա՝ նկ. № № 1, 2, 3, 5, 7, 9, 10:

Թեմա IV. Յուզում

Նրա ֆունկցիաները. միաշաքիլ բույսերի ցողունի կազմութիւնը: Կարգաւ պրոֆ. Բեդելյանի «Բույսերի անատոմիան» գրքից էջ 169—170, ուշադրութիւն դարձնել եզիպտացորենի ցողունի կազմութեան վրա: Կազմութիւնը բացատրված է լայնական կտրվածքի վրա, որտեղ պետք է ուշադրութեան առնել հետեւյալ շերտերը՝

ա) Էպիդեմիաք.

բ) Մեխանիկական օղակ.

գ) Անոթաթելային խուրձեր:

Այնուհետև անցնել երկշաքիլ բույսերի ցողունի անատոմիական կազմութեանը: Իրա համար կարգալ նույն գրքում (էջ 170—192):

Այստեղ ուշադրութեան պետք է դարձնել հետևյալ շերտերի վրա՝

1) Էպիդեմիա.

2) Կոլենիմա.

3) Պերեցիկլ.

4) Հիմնական հյուսվածք.

5) Անոթաթելային խուրձեր (Ֆլոեմա, քսիլեմա, կամբրոն).

դա լավ երևում է դոլումի ցողունի լայնական կտրվածքի վրա, դիտել նկ. № 61, կամբրոնումի գործունեությունը դիտել նկ. № 68, իսկ ցողունի մյուս հարցերը, որոնք վերաբերվում են նրա մորֆոլոգիային, դուք կարդում եք պրոֆ. Կուրսանովի և պրոֆ. Գոլենկինի «Բույսերի մորֆոլոգիան և էկոլոգիան» գրքում (էջ 57—69), այստեղ դուք ուշադրութեան եք դարձնում ցողունի ֆունկցիայի, ձևերի, մեծութեան մեամորֆոզների վրա, դիտելով նկ. № 20, 22, 23, դուք պարզ պատկերացում կառնաք ձեզ հետաքրքրող հարցերի մասին:

Թեմա V. Արմատ

Սկզբում մշակում եք արմատի մորֆոլոգիային վերաբերվող հարցերը (զանազան ձևեր, ֆունկցիաներ, կերպարանափոխություններ): Գլխավոր և կողմնակի արմատներ: Արմատի գեոտրոպիզմը, այս հարցերի վերաբերյալ կարդում եք պրոֆ. Կուրսանովի և պրոֆ. Գոլենկինի «Բույսերի մորֆոլոգիան և էկոլոգիան» գրքում (էջ 39—53), դիտելով հետևյալ նկարները՝ նկ. № 12, 13, այնուհետև անցնում եք նրա անատոմիական կազմությանը: Պետք է կարդալ պրոֆ. Բեգելյանի «Բույսերի անատոմիան» գրքի էջ 192—206, դիտում եք նկ. № № 72, 73, 76, տեքստում ուշադրութեամբ կարդալ առանձին շերտերի մասին, այն է՝

1) Ծծող հյուսվածք, որտեղից աճում են արմատային մազիկները:

2) Կեղևային սլարենիմա.

3) Էնդոտերմիս.

4) Զրատար և մազանոթների դասավորությունը արմատի մեջ: Այնուհետև անցնում եք երկրորդային կազմության:

Թեմա VI. Տերև

Տերևի ֆունկցիաները, մասերը, ձևերը, դասավորությունը ցողունի վրա: Կարգալ պրոֆ. Կուրսանովի և պրոֆ. Գոլենկինի գրքի էջ 69—90, դիտելով հետևյալ նկարները՝ նկ. № № 25, 26, 27, 29, 30, 31, 32, 34:

Նրա անատոմիական կազմը մշակելիս կարդալ պրոֆ. Բեգելյանի «Բույսերի անատոմիան» գրքի (էջ 129—155), այստեղ մատնանշված վերջին էջերը ձեզ ծանոթ են: դուք կարդացել եք ծածկող հյուսվածքները մշակելիս, երկրորդ անգամ կարդալով կարող եք ամբողջական դադափաբ կազմել նյութի մասին: Այստեղ տեքստը կարդալիս ուշադրութեան պետք է դարձնել նրա շերտերի վրա, որոնք պարզ երևում են նկ. № 41-ի վրա, լավ երևում է՝

1. Էպիդեմիա (վերին).

2. Պալիսադային հյուսվածքի բջիջները.

3) Սպունգանման հյուսվածքի բջիջները

4) Տակի էպիդեմիա:

Թեմա VII. Բույսերի բազմացումը

Այս թեման մեծ է, դրա համար կարդում եք պրոֆ. Կուրսանովի և Գոլենկինի «Բույսերի մորֆոլոգիան և էկոլոգիան» գրքի էջ 95—216. ուշադրութեան դարձնել հետևյալ հարցերի վրա.—

1. Սեռական և անսեռ բազմացում, անսեռ բազմացման տեսակները.

2. Ծածկասերմերի ծաղիկը, նրա մասերը.

3. Ծաղիկների դիպրամները, դիտել նկ. № 93, 94.

4. Ծաղկափթթություններ, ծաղկում.

5. Փոշոսման ձևերը.

6. Բեղմնավորում (դիտել նկ. № 105—106):

7. Մերմ, նրա անատոմիական կազմությունը, նկ. № 111.

8. Պտուղ և սերմ, նրանց տարածումը:

Ծրագրի մի շարք հարցերի պատասխանը ձեզ հանձնարար-

2333

ված գրականության մեջ չեք գտնի: Այդ մասին դուք կլսեք սեպտեմբերի 20-ին:

Նյութը մշակելուց հետո ներկայացնել գրավոր կոնսորիտ աշխատանք: Ընտրել ներքոհիշյալ թեմաներից մեկը՝
Թեմաներ. — Տերև — նրա անատոմիան, մորֆոլոգիան և ձևափոխությունները.

Արմատ — նույն պլանով.

Ցողուն — նույն պլանով:

Գրել մաքուր, գրագետ լեզվով, 1—1½ տետրի ծավալով: Ներկայացնել — մարտի 20-ին:

Դասախոս՝ Ն ՄԵԼԻՔՅԱՆ



581.8
Ե-81



14. 421